ԳԵՈՐԳԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ 1920Թ. ՀՈՒՆԻՍ-ՀՈՒԼԻՍԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1920թ. ամռանն իրավիճակը տարածաշրջանում կտրուկ սրվում է: Մի կողմից Դենիկինի պարտությունը, կարմիր բանակի առաջխաղացումը Անդրկովկասում և որպես հետևանք, Ադրբեջանի խորհրդայնացումը, իսկ մյուս կողմից Անատոլիայում քեմալական կառավարության կազմավորումը և խորհրդա-քեմալական մերձեցումը, Հայաստանը դրեց երկու սալի արանքում: Նման բարդ պայմաններում, երբ քեմալականները զորքեր էին կենտրոնացնում Հայաստանի սահմաններին, իսկ Խորհրդային Ադրբեջանը կարմիր բանակի օգնությամբ ձգտում էր տիրանալ Նախիջևանին, Ղարաբաղին և Զանգեզուրին Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվա է մեկնում ՀՀ պատվիրակություն Լ. Շանթի գլխավորությամբ: Ըստ Ս. Վրացյանի՝ պատվիրակության առջև դրված էին հետևյալ խնդիրները. «1. Խորհրդային Ռուսաստանը պէտք է ճանաչէ Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում եւ Ղարաբաղն ու Գյուլիստանը, 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնէ սկզբունքով, պէտք է ընդունէ թիւրքահայ հողերի կցումը Հայաստանին 3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտէ Հայաստանի ներքին գործերին. չպիտի Հայաստանում կոմունիստական գործունէութիւն ցոյց տայ. 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թոյլ տայ ,որ Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում գտնուող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի շարք ուրիշ հարցեր»[1]: Շանթի պատվիրակության հետ բանակցությունները Մոսկվայում տևում են շուրջ երկու ամիս և ավարտվում անարդյունք:

Լ. Շանթի պատվիրակության բանակցությունները Մոսկվայում ծախողվում են ոչ այդ պատվիրակության մեղքով: Հարկավ դրանց ծախողմանը նպաստեցին նաև Ադրբեջանի ղեկավարները հայ կոմունիստների հետ մեկտեղ (Ա. Միկոյան, Ա. Նուրիջանյան, Ա. Մռավյան և այլք) և Մոսկվայում գտնվող թուրք պատվիրակները: Բայց մենք այն կարծիքին ենք, որ Խորհրդային Ռուսաստանի

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1954, էջ 453:

շահերին համընկնելու դեպքում նրանց տեսակետները երկրորդական էին լինելու: Եվ այդպես էլ եղավ, քանզի հետածգվեց Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Նշենք, որ 1920թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ արտաքին քաղաքականության մեջ Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների ցանկությունն առկա էր և միանգամայնորեն անկեղծ: Բայց բանակցությունները նրա հետ անպտուղ վերջացան հետևյալ պատճառներով.

Առաջին. Խորհրդային Ռուսաստանը վերջնականապես չէր հստակեցրել իր արևելյան քաղաքականությունը և տատանվում էր քեմալական Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի տարածքային պահանջներում կողմնորոշումների հարցում:

Երկրորդ. Հայաստանից վերջնական պատասխան չուներ իր հետ հարաբերվելու դեպքում դաշնակիցներից՝ հրաժարվելու պատրաստակամության մասին:

Երրորդ. Վերջնականապես համոզված չէր նաև քեմալականների և Ադրբեջանի՝ իր նկատմամբ վերաբերմունքի անկեղծության, ինչպես նաև քեմալականների հաղթանակի մեջ:

Այս ամենը պահանջում էին նրանից ժամանակ շահել և խուսանավել: Բայց երբ ստորագրվեց Սևրի դաշնագիրը, Ռուսաստանը կտրուկ կերպով շրջվեց դեպի Թուրքիան և զավթողական դիրքորոշում որդեգրեց ՀՀ հանդեպ՝ նրան ընկալելով որպես Անտանտի դաշնակից: Դրանում, հարկավ, իրենց սխալներն ունեցան նաև հայ քաղաքական ղեկավարները: Այդ սխալներն սկսվեցին Մոսկվայից, երբ հայ պատվիրակները առանձին բանակցությունների մեջ չմտան թուրքերի հետ, որը կարող էր դրականորեն անդրադառնալ ռուսների հետ բանակցությունների վրա: Փորձենք հիմնավորել այս տեսակետը: Այս առումով կարևոր են այն հարցերի պատասխանները որոնումները, թե արդյոք Լ. Շանթի պատվիրակությունը ճիշտ վարվեց, երբ առանձին բանակցությունների մեջ չմտավ նույն օրերին Մոսկվայում գտնվող Բեքիր Սամի բեյի պատվիրակության հետ, ինչ կտային այդ բանակցություններն ընդհանուր առմամբ և չէին նպաստի արդյոք ռուսների հետ պայմանագրի նախագծի վավերացմանը: Այս խնդիրներին մեր պատմագրությունը գրեթե չի անդրադարձել, մինչդեռ այսօրվա հեռավորությունից դրանք լուրջ եզրակացությունների տեղիք են տալիս:

Հայ-ռուսական բանակցությունների վերջին օրերին Գ. Չիչերինը Լ. Շանթին առաջարկեց բանակցությունների մեջ մտնել Մոսկվայում գտնվող թուրք պատվիրակության հետ՝ քննարկելու երկուստեք հետաքրքրություն

ներկայացնող հարցեր, սակայն Լ. Շանթը այդ մերժեց[2]: Պետք է նշել, որ պատվիրակության անդամներից Հ. Տերտերյանը և Լ. Զարաֆյանը կողմ էին դրան, փորձում են նույնիսկ բանակցություններ վարել, բայց Լ. Շանթն այդ արգելում է: Այդ մասին Հ. Տերտերյանը հետևյալն է գրում, որը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Անհրաժեշտ եմ համարում այստեղ յիշատակելու, որ երբ մեր պատուիրակութիւնը զբաղուած էր տեղեկագիր կազմելով, Մոսկուայում էր գտնւում Թուրք Ազգային Մեծ Ժողովի պատուիրակութիւնը Բէքիր-Սամի բէյի գլխաւորութեամբ, որ առաքելութիւն ունէր խորհրդային կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու:

Ես եւ Լեւոն Զարաֆեանը առաջարկեցինք ընկ. Լ. Շանթին մասնաւոր տեսակցութիւններ ունենալու թուրք պատուիրակութեան հետ եւ աշխատելու իրարհասկացողութեան գալ տաճիկների հետ, իսկ եթէ այդ չյաջողուէր, գոնէ շօշափած կը լինէինք իրենց տրամադրութիւնները: Առաջարկ բերողներս այն կարծիքին էինք, որ տաճիկները գոհ պիտի մնային, եթէ մենք կարողանայինք երկուստեք գոյութիւն ունեցող վէճերը կարգադրել առանց Սովետական Ռուսաստանի միջամտութեան: Տաճիկները աւելի պատճառներ ունէին կասկածանքով մօտենալու սովետական կառավարութեան բարեկամական անկեղծ զգացմունքներին, քան թէ մենք՝ հայերս:

Չնայած, որ մեր առաջարկը որեւէ վնաս չէր կարող բերել մեր Դատին, բայց եւ այնպէս ընկ. Շանթը բուռն կերպով ընդդիմացաւ թուրքերի հետ տեսակցութեան գաղափարին: Առարկեց, որ նախ՝ լիազօրուած չենք տաճիկների հետ բանակցելու եւ երկրորդ՝ որ ինքը կողք - կողքի չի՛ նստի մեր ազգի ջարդարարների հետ:

Աշխատում էինք համոզել, որ այստեղ լիազօրութեան խնդիր չկայ, այլ տրամադրութիւններ շօշափելու հարց եւ եթէ պէտք լինի, Հայաստանի կառավարութիւնից հետագային կը ստանանք անհրաժեշտ լիազօրութիւնները: Ինչ վերաբերում է երկրորդ առարկութեան՝ գտնում էինք, որ դիւանագիտական յարաբերութիւնների մարզում զգացմունքը անելիք չունի, այլ միայն սառը դատողութիւնը եւ մեր ժողովրդի շահը:

Դժբախտաբար, այդ խնդրում մեզ չյաջողուեց համոզել ընկ. Շանթին, եւ մենք էլ նպատակայարմար չգտանք, առանց նրա համաձայնութեան, շփման

---

[2] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան 1999, էջ 242:

մէջ մտնելու տաճիկ պատուիրակութեան հետ եւ ցաւով յետ կանգնեցինք մեր մտադրութիւնից»[3] (Ընդգծումները մերն են - Գ. Գ.):

Այս մեջբերման մեր ընդգծումներից նախ և առաջ պարզ է, որ իսկապես ճիշտ է վերը նշված մեր տեսակետը, որ թուրքերի և բոլշևիկների հարաբերություններն անկեղծ չէին, նրանք իրար այնքան էլ չէին վստահում, որը լավ առիթ էր հայերի համար բանակցելու թուրքերի հետ: Պատահական չէ, որ Հ. Տերտերյանը գրում է, որ ցավով են հետ կանգնել բանակցելու մտադրությունից՝ տեղի տալով Լ. Շանթի զգացմունքային պահվածքին: Իսկ եթե այդ հարաբերություններն անկեղծ չէին, նշանակում է՝ կարող էին հայ–թուրքական բանակցությունները հաջող կամ դրական ելք ունենալ, եթե կայանային: Հասկանալի է, որ թուրքերը նույնպես, ինչպես և բոլշևիկները պետք է պահանջեին, որ հայերը հրաժարվեին դաշնակիցներից, ինչը դյուրին խնդիր չէր: Մի բան ակնհայտ էր նաև, որ թուրքերը հայերին առաջարկելու էին ավելի սահմանափակ լինել իրենց տարածքային պահանջների մեջ: Բայց տվյալ իրավիճակում թերևս դա ավելի ճիշտ կլիներ և այս դեպքում ամենայն հավանականությամբ չէր կայանա հայ-թուրքական վերջին պատերազմը: Չպետք է մոռանալ նաև, որ հայ-թուրքական բանակցությունների անտեսման սխալականությունը հետագայում խոստովանել են ՀՅ ղեկավար շատ գործիչներ: Այսպես՝ Ա. Խատիսյանը հետևյալն է գրում .« Իսկ համաձայնութիւնը քէմալականներու հետ: Մենք շատ ենք խօսած անոնց մտայնութեան մասին. անոնք կ'ընդունեին Հայաստանը թոյլ, նիհար, 20–30 000 քառակուսի քիլոմետր սահմաններով, առանց նաւահանգիստի, չորս կողմեն սեղմուած: Բայց այնուամենայնիւ, հէնց ժամանակ շահելու համար եւ հնարաւոր դասավորութիւններու տեսակետէն՝ թուրք գործիչներու հետ խօսակցութիւնները իր ժամանակին կրնային օգտակար ըլլալ, եւ այդպիսի խօսակցութիւններու համար ոչ բոլոր հնարաւորութիւնները օգտագործուեցան»[4]:

Սակայն, պետք է ավելացնել, որ Ալ. Խատիսյանի հետ հետագա հանդիպումներում թուրքերն առաջարկում էին ավելի լայն սահմաններով Հայաստան: Եվ նրանք հազիվ թե խաբեին: Պատմաբան Ա. Ներսիսյանը գրում է. «Քեմալի հետ հաշտությունը կարող էր հնարավոր դառնալ 1920թ. հունիս–հուլիսին, երբ նրա դրությունն աղետալի էր, քանզի պարտություն էր կրում հունա-

---

[3] Տերտերեան Հ., Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, տես «Հայրենիք» ամսագիր, թիւ 1, յունուար, 1954, էջ 12-13:

[4] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 204:

կան բանակից և դաշնակիցներից: Հետաքրքիր է, որ նման խորհուրդ Ալ. Խատիսյանին տվել են և Հարբորդը և ամերիկյան դերծովակալ Բրիստոլը»[5]:

Փաստորեն, ստացվում է, որ Մ. Քեմալի համար հաշտությունը ցանկալի էր հենց Լ. Շանթի բանակցությունների օրերին, երբ Մոսկվայի թուրք պատվիրակության վիճակն էլ այնքան բարվոք չէր և Գ. Չիչերինը տանում էր խուսանավողական քաղաքականություն: Կարող է հարց առաջանալ՝ չէ՞ որ դա կարող էր դաշնակիցներին դուր չգալ: Բայց Սևրի պայմանագիրը կնքելուց առաջ արդեն պարզ էր, որ այն չի իրականանալու, քանզի դաշնակիցները՝ ի հակակշիռ բոլշևիկների, արդեն օգոստոս ամսին փորձում էին հարաբերություններ ձևավորել Քեմալի հետ, ինչը նշանակում է, որ հայերն ավելի շուտ պետք է գնային դրան: Ամենևին պատահական չէր, որ իրենք դաշնակիցներն էլ և մասնավորապես ամերիկացիները, նույն խորհուրդն էին տալիս հայերին: 1920թ. հուլիսին Կ. Պոլսում գտնվող Ալ. Խատիսյանը հանդիպում է Ամերիկայի դերծովակալ Բրիստոլին և հույս հայտնում, որ կիրակնանա Վիլսոնի խոստումը հայերին քաղաքական օգնություն ցույց տալու՝ առումով: Բրիստոլն անմիջապես հետևյալն է ասում. «Ուիլսոնը բոլորովին չ'արտահայտեր իր ժողովուրդի կարծիքը, ան կ'ըսէ այն, ինչ որ բոլորովին չի համապատասխաներ ամերիկացիներու շահերուն ու տեսակէտներուն: Դուք այդ մասին պատրանքներ պէտք չէ ունենաք»[6]: Բրիստոլը այնուհետև շեշտում է, «թե առհասարակ ինքը իր պարտքը կը համարէ նախազգուշացնել հայ քաղաքական գործիչները, որ իրենք թուրքերու հետ փնտռեն մերձեցում՝ իրենց պահանջները հասցնելով նվազագոյնի, հակառակ պարագային նրանց կը սպասէ ծանր ապագայ: Արդարութիւնը կը պահանջէ անգամ մը ալ ըսել, - շարունակում է Խատիսեանը, - որ գրեթէ նոյնանման խորհուրդ տուաւ ինձ նաեւ Հարբորտը, բայց ավելի մեղմ ձեւով»[7]:

Ինչպես համոզվում ենք, դաշնակիցներն իրենք էլ հասկացնում էին, որ իրենց վրա հույս չդնեն և փորձեն լեզու գտնել թուրքերի հետ: Հնարավոր էր արդյոք, որ թուրքերը հայերի հետ բանակցելու դեպքում տարածքային զիջումների գնային: Կարծում ենք, որ հնարավոր էր, եթե հայերը կամ հրաժարվեին դաշնակիցներից, կամ էլ նրանցից սպասելիքներին զուգահեռ բանակցեին թուրքերի հետ: Տիրում էր այն համոզմունքը, որ թուրքերի հետ խոսելիք չկա: Բայց 1920թ. ամռանը Ալ. Խատիսյանը հարկ է համարում հանդիպել ներքին

---

[5] Ներսիսյան Ա, Սևրի պայմանագրի ձախողման պատճառները, տե՛ս «Հյուսիսափայլ» Հյուսիսային համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 20:
[6] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 230:
[7] Նույն տեղում, էջ 230-231:

գործոց նախարար Ռեշատ փաշայի հետ: Նա վերջինիս բացատրում է,որ «ցանկալի է փոխադարձ համաձայնութեան միջոցով որոշել Միացեալ Հայաստանի սահմանները՝ մտցնելով հայկական հողամասերու մէջ վեց վիլայէթներու կարեւոր մասը, նավահանգիստ մը եւ այսպէսով լուծել մեր դարավոր վէճը:

Մեր առաջին տեսկցութեան միջոցին,- շարունակում է Ա. Խատիսեանը,- Ռեշատը աւելի կը լսէր: Երկրորդ անգամ ան, աւելի գործօն էր կարծիքները արտայայտելու մէջ, թէեւ ընդհանրապես սաստիկ վերապահ էր: Ան թուղթի վրայ գծեց Հայաստանի հնարաւոր սահմանները՝ մտցնելով Հայաստանի հողերու մէջ ամբողջ ռուսական Հայաստանը, Ալաշկերտի եւ Բասէնի հովիտները եւ իբրեւ նավահանգիստ Ռիզեն: Այսպէսով՝ Վանը, Մուշը, Էրզրումը եւ Տրապիզոնը կ'անցնեին Թուրքիային»[8]:

Այն հարցի մասին, որ թուրքերը հայերին կարող էին խաբել, Ա. Ներսիսյանը հետևյալն է գրում. «Բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ քեմալականների հետ բանակցութիւնները ոչինչ չէին կարող տալ, կարելի է հարց տալ, թէ 1920թ. ամրանը (Յունիս-Յուլիս), երբ Քեմալը նեղ դրութեան մէջ էր, հայոց հետ դաշինքը գոնէ չէր փրկի Արեւմտեան Հայաստանի մի մասը եւ չէր կասեցնի պատերազմը Հայաստանի Հանրապետութեան հետ: Այս հարցին ոչ մէկը չի կարող վերջնական ժխտողական պատասխան տալ: Հակառակը յանգեցրեց նրան, որ Թուրքիան Հայաստանը համարեց Անտանտի դաշնակից եւ Ռուսստանի օգնութեամբ ուժեղանալով՝ ստիպեց Դաշնակիցներին թեքուել իր կողմը՝ ի վնաս Ռուսաստանի, իսկ Հայաստանը, մեկուսանալով ու մնալով դաշնակիցներ–Ռուսատան–Թուրքիա օղակի մէջ, ահաւոր պարտութիւն կրեց եւ մասնատուեց: Եւ Սեւրի պայմանագիրը մնաց թղթի վրայ...»[9]:

Հիրավի, մենք համոզված ենք, որ եթե Լ. Շանթը առաջնորդվեր ոչ թե հույզերով, այլ սառը բանականությամբ, ապա հնարավոր է, որ Մոսկվայում ստորագրվեր հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը և ավելի ամրապնդվեր Խորհրդային Ռուսաստանի տեղը ՀՀ արտաքին քաղաքականության կողմնորոշումներում: Հնարավոր է, որ Զանգեզուրի և Նախիջևանի հարցում բողոքեր Ադրբեջանը, բայց գոնե դրանով կկասեցվեր շատ չանցած ռուս-ադրբեջանական համատեղ հարձակումը հիշյալ տարածքների և Զանգեզուրի վրա: Ոչ ոք չի կարող վերջնականապես հերքել, որ քեմալականներից ավելի նեղ տարածքներ պահանջելու դեպքում վերջիններս կհարձակվեին Հայաս-

---

[8] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 231:

[9] Ներսիսեան Ա., Ռուբէն, Երեւան, 2007, էջ 343:

տանի վրա և Դաշնակիցների դեմ նրանց և բոլշևիկների դաշինքը ուղղված չէր լինի նաև Հայաստանի դեմ: Անշուշտ, Հայաստանն ի վերջո կխորհրդայնացվեր, բայց ամենայն հավանականությամբ ավելի լայն սահմաններով: Չէ՞ որ Վրաստանը, որը Ռուսաստանի հետ 1920թ. հունիսի 7-ին կնքել էր իր անվտանգությունն ու անկախությունը երաշխավորող պայմանագիր, նույնպես բռնությամբ խորհրդայնացվեց: Բայց այստեղ խնդիրը վերաբերվում է նրան, որ ՀՅ քաղաքական ղեկավարության միջև ընդհանրության չէր հասել այն համոզմունքը, որ պետք էր ամեն կերպ լեզու գտնել թուրքերի հետ, որն ինչ-որ տեղ նշանակում էր նաև ռուսների հետ լեզու գտնել և այդ դեպքում Հայաստանն աննախադեպ բաժանման չէր ենթարկվի 1920-21թթ.ին. Այս կարծիքին է նաև սփյուռքահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանը, որի հետևյալ ընդհանրացման հետ նույնպես կարելի է համաձայնվել. «Եթէ հայ եւ թուրք պատուիրակները, առանց ռուսների միջնորդութեան, փորձէին իրենց հարցերը լուծել, մանավանդ այն ժամանակ, երբ հայ–թրքական հակադրութիւնները դեռ սաղմային էին, գուցէ կարելի կլինէր հետագայ արյիւնահեղութեան առաջն առնել[10]»:

Պատմաբան է. Զոհրաբյանը անդրադառնալով Լ. Շանթի դիվանագիտական գործունեությանը, գրում է. «Պատվիրակության նախագահի նման դիրքորոշումը չի խոսում Շանթ-դիվանագետի օգտին, քանի որ դիվանագիտության մեջ իրադրությունը ճիշտ գնահատելու և արագ կողմնորոշվելու ունակությունը, ճկունությունը, սառը դատողությունն ու սթափ հաշվարկը անհրաժեշտ պայման են: Մինչդեռ բոլոր փաստերը վկայում են, որ հանձարեղ գրողը օժտված չէր նման հատկանիշներով: ...Ուրեմն Հայաստանի կառավարությունը կամ սխալվել է նրան նշանակելով Մոսկվա գործուղվող պատվիրակության նախագահ, կամ՝ հակառակը, նրան հենց այդպիսի անձնավորություն էր պետք»[11]:

Այսպիսով, ըստ մեզ, Հայ–թուրքական փոխզիջումային համաձայնությունը դրական հետևանքների կարող էր բերել թե հայ–ռուսական և թե հայ-ադրբեջանական հարաբերությունների առումով:

---

[10] Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երեւան, 1997, էջ 214-215:

[11] Զոհրաբյան՝ է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երեվան, 1997, էջ 57-58: